



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԹԱՆԿՈՐԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՆԱՑ Ա. ԵԿԵՂԵՑՈՒ



Ահետիս Բ. ԶՈՒԿԱՍԻԱՆՑ
ՀԱՅՎԵԴՐ ԵԿԵՂԵՑԲԵԿ ՓԵՄՔԵՐԵՎԱ
ԹԻՖԼԻՍԻ ՎԱՆԱՑ Ա. ԵԿԵՂԵՑՈՒ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ԵԿԵՂԵՑՈՎԱՆ ԹԱՆԴԱՐԱՆ

Ճատ անդամ է խօսուել լրագրութեան մէջ, թէ չայաստանի այս ու այն կողմը երևան են գալիս տեսակ տհսակ հնութիւններ, բայց այդ ամենը մասամբ ընկնում է եւրոպացիների ձեռքը, իսկ մեծ մասամբ մեր փառատր անցեալի այդ թանկապին մնացորդները ժողովրդի տղիտութեան շնորհիւ փճանում են և ոչնչանում, մետաղը հալում է կամ ջարդուելով այլ նպատակի համար է գործ դրում, իսկ մագաղաթը այրում կամ կարասներին որպէս կափարիչ ծառայում:

Դեռ 1877 թուին անզուզական «Փորձ» ամսագիրը խօսելով անցեալի յիշատակարանները ուսումնասիրելու մասին՝ առաջարկում էր «հիմնել մի ընկերութիւն», որի նպատակը պիտի լինէր «հետազոտել հնութեան յիշատակարանները և ձեռք բերել հնագիտական իրեղիններ»:

Այնուհետեւ այդ խնդիրը նորից արծարծուեցաւ 1893—5 թուերին, երբ գործի գլուխ անցնելով յարգելի հնասէր պ. Միք. Թամամշեանը, սկսաւ նախապատրաստական ժողովներ գումարել, որին մասնակցում էին Թիֆլիս գտնուող մի քանի յայնի հայ գրադէտներ և ներբոյ ստորագրեալս, այդ տեսակ մի կրօնական-պատմական թանգարան բանալու Թիֆլիսի Հայոց Վանքի մայր եկեղեցու բակում թեմակալ Սուաջնորդի հովանաւորութեան ներքոյ. Մասնաժողովը դիտաւորութիւն ունէր զորա համար նախապէս մի յարմարաւոր շէնք կառուցանել նոյն տեղում: Ոգեստուած այդ ցանկալի գործով նոյն ժա-

մանակները մենք այդ խնդիրը մի յօդուածով արծար-
ծեցինք և «Արձագանք»-ի էջերում։

Բայց խնդիրը միանդամեց այլ կերպ վճռուեցաւ։

Թիֆլիսին աշ անծանօթ բարեղործ պլ. Աւետիս Ղու-
կասեանը, որ, ինչպէս յայտնի է, խըր հաշուով կառուցել
է Բագուի Հայոց Մարդասիրական ընկերութեան շի-
նուածրի հրաշակերտ դահլիճը, որ կառուցել է մի սըր-
բատաշ հոյակապ շինութիւն Սևանի հոչակաւոր մենաս-
տանի մօտ, հայ լրազրութեան մի հարուստ ժողովածու
կնելով՝ նուիրել է ո. Էջմիածնի մատենադարանին և այլն,
յայտարարութեամբ 1897 թ. յունիս ամսին խոստա-
ցաւ Աղջիս Վեհ. Հայրապետին խըր ծախքով մի մեծա-
ծախ բայց փոքր թանդարան կառուցանել Վանքի բա-
կում և Հայրապետական կոնդակով հաճութիւնը ստանալուց
յիտոյ ձեռնարկեց խսկ գործին։

Այսօր գրեթէ պատրաստ է այդ ցանկալի շինուած-
քը, որի բացումը տեղի պիտի ունենայ առաջիկայ սեպտեմ-
բեր ամսին։ — Վանքի արևմտեան կողմը, մաքուր, սրբատաշ
և կոփածոյ, սպիտակ ու կարմիր քարերից, քանդակներով
ու հայկական ճարտարապետութեամբ մի հրաշակերտ է դա,
կամարակապ և չորս փոքրիկ կաթողիկէներով զարդա-
րուած։ Արեւելեան կողմից մուտքը բացում է երկու քա-
րաշէն և աղեղնաձև սանդուխների գլխին։ Եօթը ճոխ և
մեծ որմնապահարաններ են պատրաստուած թանգարա-
նի իրեղէնների համար։ Եւ առ հասարակ շինուածքը, թէ
և փոքր, բայց հաճոյական տպաւորութիւն է գործում
տեսնողի վերայ։

Մենք ախորժ հաճութեամբ կցում ենք «Լումայ»-ի
ներկայ զբրին ինչպէս եկեղեցական թանգարանի, այս-
պէս նաև իրան՝ յարգելի հիմնադրի նկարները, մանա-
ւանդ որ մեր ունեցած հաւաստի տեղեկութիւններով՝ պ.
հիմնադիրը թանգարանի հաստատութեան հետ գիտա-

ուրութիւն ունի կապել մի քանի շատ օգտակար և ցանկալի ձեռնարկութիւններ:

Կփափագէինք, որ պ. Դուկասեանը շատ հետևողներ ունենար հայութեան մէջ:

Դիւս ա. Բահ. Աղամենանց

ՆԵՐՍԻՍԵՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՇԾ ԱՄԹԱԿԱՀ

Ինչպէս վաղօրօք ծանուցուած էր լրագիրներում՝ անցեալ մայսի 21-ին տօնուեցաւ Ներսիսեան Դպրոցի 75 ամեայ գութեան տարեդարձը:

Դպրոցի բակը զարդարուած էր ամեն կերպ: Շուրջը կախուած էին Օգոստ. Կայսեր, Ներսէս Ե ի և յաջորդ կաթուղիկոսների ու Դպրոցի մի քանի բարերարների պատկերները: Իսկ վահանների վրայ գրուած էին Դպրոցի երկու երկու հին տեսուչների եւ երեք բարերարների անունները: Ներկայ էր բաւական բազմութիւն:

Հանդէսի սկզբում թեմիս բարձր սրբազան Առաջնորդ Տ. Դէորդ Արքասիսկոպոսը հոգեւորական դասի հետ հոգեհանգիստ կատարեց Դպրոցի հիմնադրի՝ Ներսէս Ե. Հայրապետի համար, որից յետ անմիջապէս Տ. Դէորդ Սրբազանը հանդէսը բացեց մի գեղեցիկ ճառով, որի մէջ բնաբան առնելով այն, թէ ինչպէս Յիսուս մի քանի հացով ու ձկնով հազարաւորներ կերակրեց՝ ցոյց տուեց որ նոյնպէս էլ Ներսէս կաթողիկոսը ոչնչից այդպիսի մի մեծ հաստատութիւն ստեղծեց հայազգի չքաւոր մանուկների համար:

Երգեցիկ խումբը պ. Մ. Աքմալեանի ղեկավարութեամբ երգեց Կայսերական հիմնը, Այնուհեաւ հոգաբարձու պ. Փալանթարը կարդաց Ազգիս Վեհ. Հայրապետի սրբատառ կոնդակը, որ, ինչպէս եւ հիմնը լսեցին ոտքի կանգնած: Նորին Օծութիւնը օրինելով երջ. Հիմնադրի յիշատակն՝ այդ կոնդակով պատուի էր հոգաբարձութեան, ա) հինգ որդեգիր նշանակել Դպրոցում, Կիբկիայի, Աղթամարի, Պարսկաստանի, Ուտիացւոց աշխարհի եւ Զէրքէզահայոց միհակներից, որոնք ուսումն աւարտելուց յետ գնան իրանց հայրենիք եւ հոգեւորականներ լինին. բ) ի նկատի առնել Դպրոցի այժմեան ուսուցիչներից նոցա, որոնք 25 տարի ծառայել են ուսուցչութեամբ թէ Ներսիսեան եւ թէ այլ դպրոցներում, եւ գ) տեսչին եւ ուսուցիչներին տալ միանուագ պարգեւ ի պատիւ հանդիսին:

Դպրոցի տեսուչ պ. Բալաղեանը կարդաց «Ուսումնական»